ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 31.03.2016թ. թիվ 106-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հասարակական պաշտոնների նշանակման և ազատման վերաբերյալ» կարգի 1.3 կետի, 05.09.2016թ. թիվ 391-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի գործունեության կարգի 2.1 և 2.2 կետերի պահանջներով,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախորդ կազմի լիազորությունները դադարել են,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. ***Մեկ տարի ժամկետով Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամներ նշանակել՝***
   - ***Փաստաբան Հարութ Ակլունցին (արտոնագիր № 2468),***
   - ***փաստաբան Ռոման Ահարոնյանին (արտոնագիր № 1289),***
   - ***փաստաբան Էմին Բեգլարյանին (արտոնագիր № 1400),***
   - ***փաստաբան Արսեն Մկրտչյանին (արտոնագիր № 2134),***
   - ***փաստաբան Դիանա Շախրամանյանին (արտոնագիր № 2002)***
   - ***փաստաբան Արմինե Ֆանյանին (արտոնագիր № 1262),***
   - ***փաստաբան Արմեն Ֆերոյանին (արտոնագիր № 1554)***
2. ***Փաստաբան Հարութ Ակլունցին նշանակել Հանձնաժողովի համակարգող:***
3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Հանձնաժողովի նորանշանակ անդամներին:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Սիմոն Բաբայան

10 դեկտեմբեր 2021թ.
թիվ 289-Ա
ք. Երևան